

Ի. Ն. ՅԱԿՈՎԵԼՅԱՆ, ՊԵՏ. Ֆ. ՅՈՒ. ՔՈՂՄԱՆ

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ
ԳՅՈՒՂՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ
ՏԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՍՀՄԻ
1933

Ե.Ն. ՅՈՒՆԻԼԵՐ, ՅԱԼ. Ֆ. ՅՈՒ. ԲԵՐՄՈՒ

616.935

3

ԱՎԱՐԳՈՅ Է 1981 թ.

ԻՆՉՊԵՍ ՊԱՅՔԱՐԵԼ
ԴԻԶԵՆՏԵՐԻԱՑԻ ԴԵՄ
ԳՅՈՒՂՈՒՄ

1878 A $\frac{T}{4646}$



ԳԵՂԱԿԱՆ
ՑԵՐԵՎԱՆ



1938

ԴԻԶԵՆՏԵՐԻԱԼՆ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ Ե

Ամառ ժամանակ և աշնան սկզբին հաճախ յերեան են գալիս սուր ստամբուստ-աղիքային հիգանդությունների դեպքեր, կինում են նաև դիգենտներիայի կամ արնալուծի դեպքեր:

Դիզենտերիան սուր վարակիչ հիվանդություն է, վորն ախտահաբում և գլխավորապես հաստ աղիքները: Այդ հիվանդությունը կարող է լայնորեն տարածվել, յեթե նրա բանկումները վերացնելու համար տեղերում իր ժամանակին յեռանդուն միջոցների չդիմեն:

Դիզենտերիայի բոնկումները կտրում են հիվանդացածներին աշխատանքից և բանվորական ձեռքերն զբաղեցնում հիվանդներին խնամելու և նրանց տեղափոքելու հոգացողությամբ:

Դրան պետք է ավելացնել և այն, վոր գիշգենտերիայից մահանալու դեպքերը բավականին զգալի յեն, մահավանդ յերեխաների մեջ, վոր այդ հիվանդության յուրաքանչյուր դեպք հիգանդացածի ընտանիքին մեծ անհանգստություն և հոգս և պատճառում:

Պարզ է, թե ինչքան կարեսը և իր ժամանակին կիրարկել բոլոր միջոցները դիզենտերիացի յերեան զալը կանխելու, կամ արդեն յեղած հիվանդությունների բռնկումները լիկվիդացիացի յենթարկելու համար:

Դիզենտերիայի նկատմամբ առողջապահան կան որդանների ձեռք տուած միջոցները վճռական հաջողության չեն հասնել, յեթե գյուղխորհուրդներներն ու կոլտնտեսությունների վարչությունները, խորհանտեսությունների և ՄՏԿ-ների գիրեկցիանները, կոլտնտեսաւին և բանվորական հասարակայնության հետ չոգնեն այդ միջոցները կյանքում կիրառելու համար:

Ստամոքսաւաղիքային վարտկիչ հիմունդությունների գեմ պայքարելու համար, դիզենտերիայի գեմ պայքարելու համար հսկայական նշանակություն ունի խորհրդային, տնտեսական և հասարակական կազմակերպությունների մբառական հոգացողությունը բնակավայրերի բարեկարգության ու մաքրության մասին, աշխատավորներին լավորակ խմելու ջուր մատակարարելու մասին, հասարակական սննդի հիմնարկերում և առևտարական ցանցում մաքրություն պահպանելու մասին:

Դիզենտերիալի դեմ մղվող պայքարում
փոքր գեր չի խաղում նաև լավ դրված սանիտա-
րական – լուսավորական աշխատանքը՝ աղքա-
բնուկության մեջ սանիտարական գիտելիքներ
տարածելը և ունակություններ զարգացնելը,

Դիզենտերիան լուրջ հիվանդություն և նա
քայքայում և հիվանդի ուժերը Հիվանդը կորց-
նում և ախորժակը, նա տաքություն և լուծ և
անենում:

Լուծը լինում և որական մի քանի անգամ
— սկզբում հասարակ իսկ հետո՝ արյունալի: Դուրս
գնալու ցանկությունն ավելի ու ավելի հաճա-
խակի յե դառնում, իսկ կղանքը դառնում ել
ավելի արլունու, Մի քանի որվա ընթացքում
հիվանդը սաստիկ հյուծվում և և հաճախ, ինչ-
պիս արդեն առվել և, մահանում և:

Պետք և հիշել, վոր դիզենտերիան չափա-
զանց վարակիչ հիվանդություն և,

Յուրաքանչյուր վարակիչ հիվանդություն
առաջանում և հատուկ մանրագույն կենդան և-
յակից — հիվանդածին միկրոբից:

Դիզենտերիան նույնպես առաջանում և հա-
տուկ միկրոբից, Յերբ այդ միկրոբներն ընկնում
են մարդու աղիքների մեջ, այնտեղ սկսում են
բազմանալ և վարակված մարդը մի քանի որից
հետո հիվանդանում և:

Դիզենտերիայի վարակի աղբյուրը հիվանդ
մարդն և, նրա կզանքը, Այն ըստոր առարկանե-
րը, վորոնց վրա ընկնում և հիվանդի կղանքը,
կարող են փոխանցել վարակը, ինչպես՝ հողը,
վարի վրա դուրս և նետված կզանքը. ջուրը. վարի
մեջ ընկել ե նա, հիվանդի իրերը, որինակ՝ նրա
սպիտակեղենը, ամանը, հիվանդի կեղտոտած
աննդամթերքները և այն:

Դիզենտերիայի վարակը բակից տարած-
վում և մարդկանց ու կենդանիների վոտքերի
միջոցով, յեթե բակը կեզառտված և հիվանդի
կզանքով, Վարակը տարածում են նաև ճանճերը՝
ուղղակի հիվանդի կղանքից և իրերից,

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻՎ ՀԻՎԱՆԴԻ ԽՆԱՄՔԸ

Եեթե հիվանդին շրջապատողները նախագ-
գուշական միջոցները չպահպանեն, կարող են
վարակվել նրանից, Իսկ յեթե նրանք այդ մի-
ջոցները պահպանեն, կարելի յե կանխել հիվան-
դությունը:

Ստամորսա - աղիքային խանգարումների
յաւրաքանչյուր գեղքի ժամանակ (ցավեր վրա-
վայնում, սրտախտանոց, փսխում, լուծ) չպետք և
սպասել և բորձիթող անել հիվանդությունը,
սետք և ամիջապես դիմել բուժողնության:

Լուրջ հիվանդությունն անուշադրության
մատնելու զեղքերում նույն իսկ բուժման լաւ
վագույն միջոցները չեն կարող մեծ ոգնություն
ցաւց տալ հիվանդին: Այդ պատճառով, այն
հիվանդները, վորոնց հիվանդությունը բարձի-
թող և արված, հաճախ մեռնում են:

Վաչ մի զեղքում չպետք է հրաժարվել ար-
ևալուծով հիվանդներին հիվանդանոցում տեղա-
վորելուց: Այստեղ հիվանդին ավելի լավ են
խնամում ու բուժում, քան տանը: Բացի դրա-
նից, հիվանդանոցում ավելի լավ միջոցներով են
վոյնչացնում այն վարակը, վորն արտազատում
և դիղենտերիացով հիվանդը:

Եթե հիվանդը տանն և մնացել, առա նրան
խնամող անձինք պետք է հետեւ մարմնի, ա-
ռանձնապես ձեռքերի, սպիտակեղենի և հագուս-
տի մաքրությանը:

Նույն իսկ հասարակ լուծով հիվանդների
սպիտակեղենը լվանալուց առաջ պետք է լավ
յեփ տալ մոխրաջրի մեջ, քանի վոր յեփ տալն
սպանում և վարակին: Անհրաժեշտ և ջրի մեջ
յիռացնել նաև հիվանդի դործածած ամանները:

Հիվանդին խնամելիս պետք է հազնել մա-
քուր խալաթ կամ գոզնոց: Այդպիսի խալաթը
կամ գոզնոցը նույնպես պետք է վարակաղերծել
լվանալուց առաջ:

Քանի դեռ հիվանդը տանն և, նրա կղանքը, նախ քան արտաքնոցը լցնելը, պետք է անպայման վարակտղերծել Դրա համար նրա վրա լցնում են 10—տոկոսանոց քլորակը լուծույթ կամ 5—տոկոսանոց լիզոլի լուծույթ այնպես, վոր կղանքը ծածկվի լուծույթով, և թողնում են $\frac{1}{2} - 2$ ժամ։ Այն անոթը, վորի մեջ դուրս ե զնացել հիվանդը, անհրաժեշտ և միշտ ծածկած պահել։

Մեռածի ազգականները վերջին հրամեցած ժամանակ յերբեմն համբուրում են զիակը, Այդ վերին աստիճանի վտանգավոր սովորություն եւ Արնալուծից, ինչպես և ուրիշ վարակիչ հիվանդություններից մահացածների մաշկի վրա կարող և վարակ լինել։

Վտանգավոր և նաև հոգեհացի սովորությունը։

Նախ և առաջ, մեռածի ազգականները, թաղման հետ կաղված իրարանցումի մեջ ընկած, բոլորովին չեն վարակաղերծում կամ անփույթ կերպով են վարակաղերծում վարակիչ հիվանդությունից մահացածի բնակարանն ու իրերը։

Յերկրորդ՝ հոգեհացի հագաքված մարդիկ չվարակաղերծված կամ վատ վարակաղերծված բնակարանում և մեռածի չվարակաղերծված իրերի մեջ կարող են հեշտությամբ վարակվել։

Վոչ մի դեպքում հոգեհաց չպետք է տալ
այն մահացածների առթիվ, վորոնք մեռել են
այնպիսի հիվանդությունից, ինչպես դիզենտե-
րիան ե, և յերբեք չպետք է գնալ հոգեհացի:

Չպետք է թույլ տալ նաև կրօնական արա-
րողություններ կատարել հիվանդի տնկողնի
մոտ:

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅԻՍԱՐԵԼՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԻԶԱՅՆԵՐԻ

Մաքրություն պահպանելն ամենազլիավոր
միջոցներից մեկն ե ընդհանրապես վարակիչ հի-
վանդությունները և մասնավորապես զիզենաե-
րիան կանխելու համար:

Այնտեղ, վորտեղ մարդիկ ընտելացել են
կեղախն և հոգ չեն տանում մաքրության մա-
սին, այդպիսի տեղերում լայն ասպարեզ կա-
ամեն տեսակի վարակի համար, վորովհետև կեղ-
տառված առարկաների վրա միշտ ել մեծ քանա-
կությամբ հիվանդածին միկրոբներ են գտնվում:
Այդ պատճառով յուրաքանչյուր աշխատավոր
իր առորյա կյանքում պետք է մաքրություն
պահպանի:

Ստամոքսա-աղիքային վարակիչ հիվան-
դությունների, այդ թվում նաև զիզենաերիայի

գեմ պայքարելու դործում հսկայական նշանակություն ունի սննդի և ջրի մաքրությունը:

Դիզենտերիան կանխելու համար մենք խորհուրդ ենք տալիս հետեվյալն անել.

1. Աւաելուց առաջ սապոնով անպայման լվանալ ձեռքերը, վորպեսզի մաքրվի այն կեղուը, վորի մեջ կարող է վարակ լինել:

Չմոռանալ սապոնով լվանալ ձեռքերն ամեն անգամ արտաքնոց գնալուց հետո:

2. Չխմել հում ջուր վոչ խորը, հեշտ կեղառուվող ջրհորներից, լճակներից, ղետերից և ուրիշ բաց ջրամբարներից: Տվյալ վայրում սառմոքսա-աղիքային խանգարումներ լինելու դեպքում առհասարակ հում ջուր չգործածել, այլ միայն յեռացրած ջուր գործածել: Չխմել վոչ մի, այսպես կոչված «սուրբ» ջուր: Նկատված ե, վոր արնալուծով հիվանդանալու դեպքերը հաճախ յեկեղեցական տօններից հետո յեն լինում: Այդ տօնների ժամանակ վոմանք խմում են չյեռացրած «սուրբ» ջուր, վորը շտու հաճախ վարակված ե լինում զանազան միկրոբներով: Այդ ձեռք, իհարկե, հեշտ և նաև արնալուծով վարակվել:

3. Չկեղտուաել խմելու ջրի սկզբնասեղները՝ ջրհորները, աղբյուրները:

Նրանց մոտ լվացք չանել, կեղտառ դույլերով

Չուր չվերցնել, Զրհորներից ջուր հանելու համար դործածել հասարակական մաքուր դուրը:

Զրհորները շողտագործել նրանցում բիդոնով կաթ սառցնելու համար: Անասնաբակերից բիդոնին կպած կեղտը կեղտոտում է ջուրը, վորհայդպիսով վարակի բուն և դաւնում:

4. Ուտելիքի մեջ չգործածել կեղտոտված բանջարեղեն ու մրգեր, Մաքրել նրանց կտած հողի, տերևների մասնիկները և այլն: Ուտելուց առաջ բանջարեղենն ու մրգերը լավ լվանալ յեռացրած ջրով:

5. Ուտելիքը, ջուրը, ինչպես նաև ուտելու և խմելու համար յեղած ամանները պաշտպանել ճանձերից ու ուտիճներից (տարական), վորոնք կարող են կեղտուանել և վարակել սննդամթերքներն ու ջուրը: Աննդամթերքներն ու ամանները ողանել լավ փակվող պահարաններում, Ամանները մաքուր պահել:

6. Նախ քան կովերի (կամ այծերի) կթելուն անցնելը՝ ինամքով լվանալ ձեռքերը սապոնով, ինչպես նաև լվանալ անասունի կուրծքը, Այլապես կեղասաված ձեռքերից կամ կրծքից կարող ե վարակ ընկնել կաթի մեջ:

7. Ցեթե հաստատ համոզված չեն, թե կաթը միանգամայն մաքուր ե, ոկտոք և այն ոզոտագործել յեռացրած վիճակում:

8. Վոչ մի դեպքում կաթի ըիդոնով արտաքնոց չմտնել, ինչպես յերբեմն անում են բաղաքում կաթ ծախող կանայք։ Այդ դեպքում վտրակը հեշտությամբ կարող ե անցնել կաթին։

9. Մաքուր պահել բնակարանը և նրա շրջապատի տարածությունը։ Ազրը, թափիթփուկները չշպրտել՝ վորտեղ պատահի, կեղտաջուրը չթափել բակի մեջ։ Դրա համար գործածել աղբի արկղները կամ լավ փակվող խուփ ունեցող աղբահորերը։

Դեղենաերիայով հաճախ հիվանդանում են այն մարդիկ, վորոնց աղիքները խանգարված են։

Աղիքների խանգարումը հաճախ պատահում է մարմինը, մասնավորապես վորովալնը խիստ մըսեցնելուց, անչափավոր ուտելուց ու խմելուց, ուռելիք գործածելուց։

Մենք խորհուրդ ենք տալիս.

1. Հանգստանալու համար չպառկել խոնավ գետին, մանսվանդ տաքացած վիճակում։

2. Չխմել շատ սառը ջուր, շատ սառը կվաս կամ ուրիշ խմիչքներ, մասնավանդ քրտնած ժամանակ կամ տաք կերակրից հետո։

3. Միանգամից չափից դուրս շատ չուտել։

4. Ուտելիքի մեջ զործ չածել խակ բանշաբեղեն ու մրգեր։

Այն անձինք, վորոնց առաջական վիճակի

հետևանքով բժիշկն առաջարկել է հատուկ զիեւտա պահպանել (կերակրի հատուկ տեսակներ, ուսելու հատուկ կարգ և այլն), այդ դիետան խախտելու դեպում ևս կարող են ստամոքսա-աղիքային խանգարումներ առաջանալ:

Դրա համար մենք խորհուրդ ենք տալիս.

1. Պահպանել բժշկի առաջտրկած դիետան.

2. Կերակրի մեջ գործ չածել այն, ինչ ար-դելել և բժիշկը:

ԴԻԶԵՆՏԵՐԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔՈՒՐԵԼՈՒ ՀՍՍԾՈԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ստամոքսա-աղիքային հիվանդություննե-րի դեմ պայքարելու գործում մեծ դեր պիտի խաղա բանվորական և կոլտնտեսային հասա-րակայնությունը:

Յուրաքանչյուր կոլտնտեսության, խորհ-ոնակառության մեջ և ՄՏԿ-ում պետք ե անմիջա-պես ընտրել հասարակական սանիտարական լիազորներ։ Այդ բանը պետք ե անուն հաշ-վով, վոր վորոշ հողամասի վրա աշխատող դաշ-տային բրիգադների համար, կոլտնտեսության մեջ յուրաքանչյուր 20 տնտեսության համար, խորհանակառության մեջ յուրաքանչյուր բանվո-րական հանրակացարանի համար, յուրաքանչյուր հասարակական ճաշարանի համար ապահովված

Հինգի մեկ հաստրակական սանիտարական լիազոր:

Ընտրված հասարակական սանիտարական լիազորներին պետք է հանձնարարել խստորեն հսկելու նրանց սովասարկած կետերի մաքրության պահպանմանը և ստամոքսա-աղիքային հիմունդությունները կանխելու անհրաժեշտ միջոցների անցկացմանը:

Այդ միջոցները հետեւյալներն են:

1. Կաղմակերպել դաշտերում՝ դաշտային քրիզադներին յիռացրած ջրի անխտափան մատակարարում:

2. Զրհումները նորոգել, սարքել նրանց մոտ հասարակական դույլեր՝ ջուր վերցնելու համար, և անցկացնել ջրամատակարարման աղբյուրների բարելավման այլ միջոցառումներ:

3. Արգելել ջրհորների և մարդկանց համար ջուր վերցնելու տեղերին անմիջապես մօտ ջրել անասունները և լվացք անել, Խմելու ջուրը գետից վերցնելու զեղքում՝ լողանալու, վկացք անելու և անասուններին ջրելու համար տեղեր հատկացնել ջուր վերցնելու տեղերից ներքեալս դետի հոսանքի:

4. Խստագույն մաքրություն պահպանել ճաշարաններում և շարժական խոհանոցներուն:

5. Յուրաքանչյուր կոլտնտեսուկանի բակում կառուցել տալ արտաքնոց և հետեւ նրա

մաքրությանը: Բացատրել բնակչությանը ստամոքսա-աղիքային հիվանդությունների տարած-ման գեմ պայքարելու գործում արտաքնոցների կարեռը դերը և արտաքնոցներից կանոնավորոգումնելու անհրաժեշտությունը:

6. Հետեւել այն մարդկանց առողջական վի-հակին, վորոնք զբաղվում են սնունդ պատրաս-տելով, սնունդը պահելով ու բաժանելով, կազմա-կերպել այդ աշխատադների ամենամսյա բժշկու-կան քննությունը: Նրանց մոտ ստամոքսա-աղիքային խանդարումներ յերեան զալու դեպ-քում, ուղարկել քննության և ժամանակավորա-պես (մինչև բժշկի թույլտվությունը) հեռացնել սնունդ պատրաստելու, պահելու և բաժանելու աշխատանքից:

7. Հետեւել հասարակական սննդի աշխատադ-ների մարմնի, մանավանդ ձեռքերի և վողջ սար-քավորման մաքրությանը:

8. Լայնորեն տարածել բնակչության մեջ զիզենտերիայով հիվանդանալու պատճառների և նրա գեմ պայքարելու միջոցների վերաբերյալ դիտելիքներ, Գործի մեջ քաշել բուժաշխատազ-ներին՝ ռայոնական և պատի թերթերում զրուց-ներ, գասախոսություններ անցկացնելու, այդ հարցերի վերաբերյալ հողվածներ ու դիտողու-թյուններ դետեղելու համար: Տարածել սանիտա-

բական—լուսավորական դրականություն:

Կոլտնսեսության մեջ դիզենտերիա հիվանդության յերեալու գեղղում հասարակական ստնիտարական լիազորը պետք ե շրջի բոլոր տնտեսությունները՝ պարզելու, թէ նման հիվանդություններ չկան արդյոք մյուս տնտեսություններում։ Հիվանդներին պետք ե հիվանդանոց ուղարկել։

Այդ շրջագայությունները պետք ե կրկնել վոչ ուշ, քան վեցորյակը 2—3 անգամ, մինչև այն ժամանակ, յերբ ավյալ բնակավայրում կղաղաքեն հիվանդությունները։

Այն տներում, զորտեղ դիզենտերիայով հիվանդներ են յեղել, արտաքնացների, աղբահորերի ազրի վրա և բոլոր կեղտութված տեղերում պետք ո քլորակիր լցնել։

Այս ե այն աշխատանքի ծրագիրը, վորը պետք ե կատարեն զյուղխորհուրդները, կոլտընտեսությունների և ՄՏԿ-ների դիրեկցիաներն ու տանիտարական լիազորներն առողջապահական մարմինների հետ միասին, դիզենտերիոյի և ստամոքսա-աղիքային ուրիշ վարակիչ հիվանդությունների գոմա-ա քարելու համար։

Գործելով այս ծրագրի համաձայն ու հենց վելով բանվորական և կոլտնտեսային հասարակայինության վրա, զյուղխորհուրդներն ու տնտեսա-

կան կտղմակերգությունները պետք և ցույց
տան խսկական ստալինյան հոգացողության որի-
նակներ աշխատանքի մարդկանց նկատմամբ,
զրա հետ միասին ապահովել գյուղատնտեսա-
կան աշխատանքների ոլլանի կատարումը, ակ-
տիվորեն պահպանելով սոցիալիստական դաշտե-
րի աշխատաղների առողջությունը:

A 4646

+878



Թարգմ. Ավ. Շաթիբյան
Պատ. խմբ. Լ. Խարմանդարյան
Լեզվ. խմբ. Հար. Գևորգյան
Տեխ. խմբ. Լ. Ահանյան
Սրբագրիչ Ա. Արզաքանյան



Գլավվետի լիազոր՝ 4048 հրատ. № 4627
Պատվեր 454 Տիրաժ 3000
Թուղթ Տպագր. 1½ մամ.
Մեկ մամ. 19,500 նշան.
Հանձնված ե արտադրության 9 մայիսի 1938 թ.
Ստորագրված տպագրության համար 11 սեպտ.
1938 թ.

Գևորգյանի Լատարան, Եկեղեց, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.




FL0039805

(044)

592

ԳԻՒԸ 18 Կ.



11853

Կամ քորածութեան առ զեւ
Գլուխ Արք ՀՀ ՀՀ 1988 թ.